Թերեզա Ամրյան

Մոխրագույն ծիածանի միջով

Արդեն երրորդ օրն է՝ պատառոտված հագուստով և բոբիկ պառկել եմ անծանոթ մի ձորում: Անընդհատ քնել եմ ուզում, բայց շունը հաչում և արթնացնում է ինձ . կոկորդումս ինչ-որ բան է կանգնել, խեղդում է: Արդեն երեք օր է՝ ջուր չեմ խմել, չեմ հիշում ամսի քանիսն է, չգիտեմ՝ ժամը քանիսն է, մրսում եմ: Վախճանին եմ սպասում . . . Ադիլն ասում էր, որ անհավատների դեմ կռվում ընկած մարտիրոսը՝ շահիդը, անմիջապես դրախտ կգնա: Ժամանակ առ ժամանակ լսում եմ սրտիս զարկերը, բայց ձեռքերս չեմ զգում, մատներս կարծես չկան: Աչքերս բաց եմ անում և հեռվում մի բերդ եմ տեսնում . չեմ կարողանում կողմնորոշվել՝ արդյոք բերդը դիմա՞ցս է, թե՞ գլխավերևումս: Տասը տարեկան էի, մեր հայ հարևան Կարապետի այգուց ծիրան գողացա, կերա, կորիզը մնաց կոկորդիս մեջ: Հիշում եմ՝ հարևան Կարապետն ամեն կիրակի եկեղեցի էր գնում՝ աղոթելու և մեղքերը խոստովանելու: Կարապետը մեր գավառի լավագույն կոշկակարն էր: Ասում էին՝ նրա նախնիները կոտորածից էին փրկվել և ապաստան գտել մեր երկրում: Ա՛խ, երանի մեկն ինձ տաներ ու լողացներ տաք բաղնիքում, մաքրեր մարմնիս վերքերը, փոխեր քրքրված շորերս: Տասներկու տարեկանում ոնց էի տգեղացել, դեմքս բշտիկներով էր ծածկվել, քիթս մեծացել էր . . . Մայրամուտից առաջ տասներկու դույլ ջուր հանեցի ջրհորից: Նստեցի ու մեջքս հենեցի պատին: Մազերիս արանքներից և քունքերից սահող քրտինքի կաթիլները խուտուտ տվեցին մաշկս: Պատի մյուս կողմից ձայներ լսեցի, էն ի՛նչ զրնգուն ծիծաղ էր. սիրտս ճտճտաց: Գիտե՞ք՝ իմ երկրում ամռան տապից հետո քարերը ողջ գիշեր զովից ճտճտում, երգում ու ճաքում էին . տասներկու տարեկանում իմ սիրտն էր սկսել այդ քարերի պես ճտճտալ կանանց ձայներից: Լուռ շրջվեցի դեպի պատի վրայի գաղտնի անցքը . փոքր քարը մի կողմ տարա և

տեսա՝ ինչպես են հորաքույրներս, մայրս, հորեղբորս աղջիկները մերկանում, բացում իրենց հյուսած մազերն ու ջուր ցողում իրար վրա: Նայում էի նրանց ազդրերին ու կրծքերին, հիացմունքից կուրծքս ուռչում էր . նույնիսկ գերաճ տված քիթս երկարեց ու սկսել ինձ խանգարել: «Իմրա՛ն, այդ ի՞նչ ես անում: Մերկ կանանց ես նայում հա՞, ա՛յ դատարկապորտ շուն»: Չհասցրի շուռ գալ, հորս ծանր բռունցքն իջավ ձախ ականջիս . աշխարհը լռեց ու մթնեց: Ծակված ու անպետք գնդակի պես ընկա բակի մի անկյունում . . . Հիմա էլ ընկել եմ անծանոթ, ցուրտ երկրի ձորերից մեկում . շունը հաչում է, չեմ կարողանում կուլ տալ կոկորդումս մնացած ծիրանի կորիզը: Գլխավերևումս ինչ-որ շինություն է երևում . տեսնես բե՞րդ է, թե՞ մզկիթ: Չեմ ուզում ոչինչ տեսնել, լռում եմ վախճանի սպասումով: Շունը կաղկանձում է, բացում եմ աչքերս ու տեսնում եմ լուսահոգի մորս . էս ո՞նց է մայրս ջահելացել, թաղումից հետո նրան չէի տեսել: «Որդի՛ս, խոստովանի՛ր, խոստովանի՛ր, որ մեղավոր ես և ազատի՛ր հոգիդ», – ասում է մայրս: Երբեք չեմ ասել՝ մեղավոր եմ: Փորձում եմ գոռալ . «Ես մեղավոր չեմ, մա՛յր, էն կեղծավոր մոլլան է մեղավոր . . . Տե՛ս, մա՛յր, տես ոնց եմ դատարկվել, ծնկներիս ոսկորները դուրս են ցցվել, ողջ մարմինս վերքերով է ծածկվել»: Տասնչորս տարեկան տղա էի, ամեն ուրբաթ ավլում էի մզկիթի բակը, թեյ էի պատրաստում և բաժանում էի այցելուներին: Մեր գյուղի աղքատ ընտանիքների տղաներից ոմանք քաղաք էին փախչում և հարստանում՝ թմրանյութ վաճառելով: Որոշ տղաներ ծառայում էին մզկիթում, և մոլլան նրանց օգնում էր դուրս գալ չքավորության ճիրաններից: Այդ ուրբաթ մոլլան ինձ ասաց . «Երեկ չեմ հասցրել բաղնիք գնալ, այսօր կգաս, բաղնիքը կտաքացնես, ինձ կօգնես . հորդ զգուշացրել եմ»: Շապիկս հանեցի, տաբատս քշտեցի ու ջուր տաքացնելու համար կրակ արեցի: Բաղնիքում մոլլան փորի վրա պառկեց սալաքարին և կարգադրեց փրփրոտ սպունգը քսել մեջքին ու ոտքերին: «Մի քիչ պի՛նդ տրորիր, ա՛յ տղա, վախենո՞ւմ ես», – ասաց մոլլան: Հետո նա շուռ եկավ, ձեռքը քսեց կրծքիս ու ավելացրեց . «Ինչ նուրբն ես, մաշկիդ վրա ոչ մի հատ աղվամազ չկա»: Մոլլային չպատմեցի, որ փոքր ժամանակ անզգուշորեն խարույկի մեջ եմ ընկել, մարմնիս մի մասն այրվել է, և դրանից հետո փորիս ու մեջքիս վրա ոչ մի մազ չի աճում: Գոլ ջուրը լցրի մոլլայի մեջքին, ոտքերին: Փրփուրը հալվեց գնաց . մոլլան նստեց, քաշեց թևիցս, հրեց ինձ և փորի վրա պառկեցրեց, մի ձեռքով գլուխս ու վիզս սեղմեց սալաքարին և իր ծանր մարմինը տարածեց ինձ վրա: Ձայնս ծիրանի կորիզի պես կանգնել էր կոկորդումս, լսում

էի մոլլայի հևոցը: Մի քանի րոպե անց մոլլան բաց թողեց վիզս և նոր ծննդաբերած կենդանու պես հևալով՝ փռվեց բաղնիքի հատակին: Ամոթից և անզորությունից թևաթափ եղած՝ վեր կացա սալաքարի վրայից և դեպի ջուրը վազեցի: Աշխարհն ու ժամանակը կանգ էին առել . սպիտակ սրբիչը շրջազգեստի պես իր մեջքին փաթաթելով՝ մոլլան մի բաժակ թեյ վերցրեց ու խուրմայով մոտեցրեց ինձ: Ոչ մի քաղցր բան այլևս չլցրեց դատարկված էությունս . ծակված գնդակի պես ընկել էի բաղնիքի մի անկյունում: «Քա՛ղցրս, իմ ընկերներից մեկը քեզ մեքենա վարել կսովորեցնի . մեքենաս կքշես, միասին հեռու տեղեր կգնանք»,– ասաց մոլլան: Գլխավերևումս բերդն է . թվում է՝ հիմա գազանի պես բերանը կբացի և կուլ կտա ինձ: Մի բարձրահասակ տղամարդ է հայտնվում շան կողքին, ձեռքի կեռ երկաթն իմ կողմ է ուղղում, խրում է կոկորդիս մեջ և փորձում է հանել ինձ խեղդող կորիզը: Արդեն տասնինը տարեկան էի, երբ մայրս մահացավ . մոլլան կազմակերպեց մորս հուղարկավորությունը . հավատացյալ կնոջը վայել թաղում . . . Էլ չէի ուզում մոլլայի սիրեկանը լինել . հոգնել էի հարևաններիս երկդիմի հայացքներից, ընկերներիս՝ հեգնանքով լի ժպիտներից: Թողեցի մոլլայի տունն ու մեքենան, ոտքով փախա գյուղից: Ճանապարհի քարերն ու ավազը մաշեցրին Կարապետի կարած կոշիկները: Նորից դարձա անտեր ու բոկոտն: Հասա Ադիլի գյուղ . Ադիլը մի ժամանակ մեր գյուղի դպրոցում մարմնամարզության ուսուցիչ էր, բայց մոլլայի հետ վիճելու պատճառով ստիպված էր եղել լքել գյուղը: Ադիլն ինձ ծանոթացրեց իր խմբի մարզիկների հետ: Ամեն առավոտ միասին վազում էինք և լողալ էինք սովորում: Մենք մի ընտանիքի անդամների պես սեղան էինք նստում և ուտում էինք Ադիլի կնոջ պատրաստած ուտելիքները . ամեն երեկո զրուցում էինք Արարչի և հրեշտակների մասին: Ադիլի տանը մարմինս ու հոգիս կազդուրվեցին, եղբայրացա նոր ընկերներիս հետ: Շատ բաներ սերտեցի . արդեն գիտեի, որ ամեն ինչում անհավատները՝ քաֆիրներն են մեղավոր, և հենց նրանց դեմ պետք է պայքարել: Նոր եղբայրներիս հետ ժամանակ առ ժամանակ գնում էի հեռու տեղերում քաֆիրներին գտնելու և պատժելու . . . Շունը հաչում է, աչքերս բաց եմ անում և հեռվում ատամնավոր մի շենք եմ տեսնում: Տե՛ր Աստված, մենակ թե այդ շենքը չծամի գլուխս: Երբ վիրավորվեցի և գետնին ընկա, ընկերներս ո՛չ Աստծու մասին հիշեցին, ո՛չ հրեշտակների . նրանք վերցրին զենքերս, հանեցին կոշիկներս, թևիս ժամացույցը և հեռացան: Հետո ինչ-որ շուն հայտնվեց, հետո էն բարձրահասակ տղամարդը եկավ: Թվում է՝ բերդի ատամներն աստիճանաբար

մոտենում են ինձ և մտնում աչքերիս մեջ: Ադիլն ասում էր, որ շահիդները դրախտ են գնում առանց տանջվելու: Մարմինս դարձել է անպետք շոր, և ոչ մի կերպ չեմ կարողանում այն հանել իմ վրայից: Նորից էն բարձրահասակ տղամարդը երկաթի կեռ կտորը խրում է կոկորդիս մեջ ու փորձում է դուրս հանել կորիզը: Ուզում եմ Աստծուն հիշեցնել, որ ես շահիդ եմ . «Չկա Աստված բացի Արարչից . . . .»: Հիշում եմ մեր հարևան Կարապետի այգին, հիշում եմ՝ ոնց էր ամեն կիրակի Կարապետը եկեղեցի գնում: Մայրս նույնպես ականջիս շշնջում է . «Չկա Աստված բացի Արարչից . . . .»: Փորձում եմ գոռալ . «Դու ես մեղավոր: Ինչո՞ւ ինձ ծնեցիր, ոչ մի օր կուշտ չկերա ու չխմեցի . ինձ կաթից կտրեցիր, որպեսզի նոր ծնված երկվորյակ որդիներիդ կերակրես: Դու էիր մեղավոր, մեղավոր էիր, որ կյանք էիր պարգևում: Չկա Աստված . . .»: Շունը հաչում է, աչքերս բացում եմ, նորից կոկորդս . . . Ադիլն ասում էր, որ հերոսացած շահիդները մահացու վիրավորվելիս սահում ու հայտնվում են դրախտում, սիրուն կանանց գրկում, գինու գետերի ափին: Երբ փոքր ժամանակ խարույկի մեջ ընկա, շապիկս հալեց կպավ մաշկիս, էն ո՜նց էր մրմռում: Հիմա էլ մարմինս է կպել հոգուս և ոչ մի կերպ ինձ հանգիստ չի տալիս . «Մայրի՛կ, օգնի՛ր հանել այս շապիկը . հենց հանեմ, կազատվեմ»: Մայրս շշնջում է ականջիս . «Որդի՛ս, հոգին ավանդելու համար հավատալը քիչ է . խոստովանի՛ր, որդի՛ս, ասա՛, որ մեղավոր ես»: Արդեն չեմ զգում ոտքերս և դանդաղ մրմնջում եմ . «Մեղավոր եմ, որ եկա այս ցուրտ երկրում քաֆիրների դեմ պայքարելու . ի՞նչ իմանայի, որ այս ցուրտ երկրում հարևան Կարապետի մայրենի լեզվով են խոսում . . . Ինձ թվում էր՝ նորից Սինջար ենք գնալու և ոչնչացնելու ենք եզդիներին»: Քանի օր է ոչինչ չեմ կերել, տեսնես ի՞նչն է մնացել կոկորդումս և խեղդում է անվերջ: Նորից մորս ձայնն եմ լսում . «Որդի՛ս, նրանք արդեն փոխում են բերդի վրայի դրոշը: Բայց այս բերդը նրանց չի մնա, որովհետև երբեք նրանցը չի եղել . . . Որդի՛ս, խոստովանի՛ր, ու թող հոգիդ խաղաղություն գտնի»: Արևի շողերը հայտնվում են բերդի վրա, և քարերը շեկ գույն են ստանում: Շեկ քարով կառուցված եզդիների սրբավայրն եմ հիշում . վեց տարի առաջ սեփական ձեռքերով պայթեցրի այն, երեք օր շարունակ մոխրագույն ծիածան կապեց եզդիական տաճարի ավերակների վրա: Իսկ հիմա ձեռքերս չեմ զգում, ուզում եմ աչքերս փակել և ոչինչ չտեսնել: Հենց սկսում եմ հանդարտվել, շունը հաչում է: Ա՜խ, եթե ոտքերս ինձ տանեին, կգնայի ու կպայթեցնեի այդ բերդը, բերդի ավերակներին մոխրագույն ծիածան կկապեր, և մեր խմբի սև դրոշը կծածանվեր ու կփայլեր

այդ գորշ ծխի մեջ: Մեր ավագ եղբայրներից մեկն ինձ մի եզդի ստրկուհի նվիրեց: Աղջկա անունը Սամիա էր, շագանակագույն մազեր ուներ, պարանոցից կաթի հոտ էր գալիս . ես էի նրա տերը, ինչ ուզեի կանեի հետը: Սամիայի հետ անցկացրած պահերին ինձ երջանիկ էի զգում, թեպետ նա ատում էր ինձ: Հենց մոտենում էի, երկու ձեռքով ծածկում էր դեմքն ու լաց էր լինում: Շուտով ինձ ուղարկեցին ուրիշ քաղաք, և ես Սամիային նվիրեցի մեր երտասարդ եղբայրներից մեկին: Վերջին անգամ եմ փորձում Աստծուն հիշեցնել, որ ես շահիդ եմ . «Չկա Աստված . . . .»: Սկսում եմ դողալ, սառը քրտինքը ներքև է հոսում, թափվում է ձյան ու ցեխի վրա . արագ հանում եմ ինձ նեղող հագուստը և ցատկում եմ մոխրագույն ծիածանի մեջ: Մարմինս արդեն ուզում է տարրալուծվել, բայց հարևան Կարապետի ազգակիցների հողը դժվարությամբ է ընդունում այն: